ՆՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ 1828 Թ. ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայ-ռուսական հարաբերությունները դարերի պատմություն ունեն: Սկզբնական շրջանում դրանք կրել են առեւտրատնտեսական եւ կրոնական, իսկ ԺԸ. դարի սկզբից (Իսրայել Օրու գործունեությամբ) նաեւ դիվանագիտական բնույթ: Ռուսաստանը Հայաստանն ազատագրելու կեղծ խոստումներով ցանկացել է հայերին օգտագործել Անդրկովկասում իր նվաճողական քաղաքականությունն իրականացնելու համար, իսկ հայերը՝ Ռուսաստանի աջակցությամբ ազատագրելու Հայաստանը: Ռուսաստանի ցարերի հորդորներով հայերի այդ գաղափարը ԺԸ. դարի 2-րդ կեսին վերածվեց քաղաքական ծրագրերի (տե՛ս Հայաստանի ազատագրման հնդկահայ եւ ռուսահայ ծրագրերը): Այդ ծրագրերը տարածվել են թե՛ հայկական գաղթօջախներում, թե՛ պարսկահայ ու թուրքահայ շրջանակներում՝ առաջացնելով ազգային ոգեւորություն: Ռուսաստանի աջակցությամբ Հայաստանի ազատագրման հույսերն ու հուզավառությունն էլ հանդիսացել են պարսկահայերի ու թուրքահայերի՝ Ռուսաստանին անցած հայկական տարածքներում վերաբնակվելու ցանկության հոգեբանական ազդակը: Վերաբնակեցման համար կարեւոր էին նաեւ տնտեսական, ընկերային, կրոնական ազդակները եւ հատկապես՝ պարսկական ու թուրքական իշխանությունների վրեժխնդրության վտանգը:

Հայությանը թվում էր, որ բավական է սկսվեն ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմները, եւ Հայաստանը Ռուսաստանի հովանու ներքո կհռչակվի ազատ եւ անկախ: ԺԹ. դարի սկզբին տեղի ունեցան ռուս-պարսկական եւ ռուս թուրքական սպասված պատերազմները, որոնց արդյունքում Պարսկաստանից եւ Թուրքիայից զգալի հայկական տարածքներ անցան Ռուսաստանին: Մասնավորապես, խնդրո առարկային առնչվող Թուրքմենչայի պայմանագրով (1828 թ.) Ռուսաստանին անցան Նախիջեւանի եւ Երեւանի խանություններն ու Օրդուբադի գավառը: Կարծես բոլոր պայմաններն առկա էին Արեւելյան Հայաստանը, եթե ոչ անկախ, ապա ինքնավար հայտարարելու համար, առավել եւս, որ լուծվում է ժողովրդագրական հարցը՝ Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածով արտոնվում էր պարսկահայերի տեղափոխվելը Ռուսաստանին անցած հայկական տարածքներ: Ռուսական արքունիքում ծառայող մի շարք բարձրաստիճան հայեր մշակեցին եւ ռուսական արքունիքին ներկայացրին Հայաստանի ինքնավարության շատ համեստ մի ծրագիր, բայց ցարը մերժեց: Պարզվեց, որ ռուսական դիվանագիտական ոչ մի ծրագրով նախատեսված չի եղել Հայաստանի ո՛չ անկախությունը, եւ ո՛չ էլ ինքնավարությունը: Պարզապես ցար Նիկոլայ 1-ինը հայերին ոգեւորելու եւ, հատկապես հեռագայում ռուսական ռազմաքաղաքական շահերը նկատի ունենալով, ինչպես նաեւ պարսկահայերի վերաբնակեցումը հաջողությամբ

իրականացնելու նպատակով, կարգադրեց վերը թվարկած տարածքներից ստեղծել Հայկական մարզ եւ այն մտցնել ռուսական տիպողոսացանկ: Այսպիսով՝ Նիկոլայ 1-ինը համարվելու էր նաեւ Հայաստանի թագավոր:

Թուրքմենչայի պայմանագրի հիշյալ հոդվածով պարսկահայերը հնարավորություն ստացան տեղափոխվելու ռուսական տարածքներ: Միաժամանակ ներում էր շնորհվում նրանց, ովքեր պատերազմի ժամանակ կարծիք էին արտահայտել կամ այլ վարք դրսեւորել: Հարկ ենք համարում մեջ բերել նշված հոդվածի երկու հանգամանքները. «Ատրպատական[1] կոչվող մարզի բոլոր բնակիչներին եւ ասորիճանավորներին շնորհվում է բացարձակ եւ կատարյալ ներում... Բացի դրանից, այդ ասորիճանավորներին եւ բնակիչներին կտրվի, այսօրվանից հաշված, միամյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ կարողանան պարսկական մարզից ազատ անցնել ռուսական մարզերը, որպեսզի կարողանան դուրս կրել եւ վաճառել (իրենց) շարժական գույքը, առանց հանդիպելու Կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված որեւէ արգելքի: Այդ անձանց կողմից վաճառվող կամ դուրս տարվող գույքն ու իրերը չպետք է ենթարկվեն որեւէ մաքսի կամ հարկի: Իսկ անշարժ գույքի նկատմամբ սահմանվում է հնգամյա ժամանակամիջոց՝ այն վաճառելու կամ նրա վերաբերյալ կամայական կարգադրություններ անելու համար...»[2]: Հայերը կարող էին իրենց նախկին բնակավայրերում թողնել լիազորված անձինք՝ իրենց անշարժ գույքը վաճառելու համար[3], բայց Պարսկաստանի կառավարությունը գաղտնի արգելում էր գնել[4]:

Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածի շնորհիվ 1828 թ. Պարսկաստանից Ռուսաստան տեղափոխվեց 50 հազար հայ: Ըստ Լեոյի հետազոտության՝ 10 հազարը տեղ չի հասնում[5]: Ղ. Լազարյանը գրում է. «Զնայած ամեն մի արգելքների, 8000 հայ ընտանիքներ իմ կողմից տեղափոխվել են ռուսական հող՝ նոր ձեւավորված հայկական մարզ... բացառությամբ 1500 ընտանիքի, որոնք մնացին»[6]:

Պատմության դասագրքերում ներկայացվել է պարսկահայերի խանդավառությունն այս առնչությամբ: Պատմաբան Լեոն արձանագրում է, որ պարսկահայերի տեղափոխությունը հարկադրաբար է կազմակերպվել, այսինքն իրականացվել է բռնագաղթ այն դեպքում, երբ Թուրքմենչայի պայմանագրով տեղափոխությունը պետք է կատարվեր կամավորության սկզբունքով:

Բանն այն է, որ Ռուսաստանին միացած հայկական տարածքները, մասնավորապես Երեւանի, Նախիջեւանի խանությունները գրեթե ամայի էին. հայերի զգալի մասին պատերազմի ժամանակ, որպես անհուսալի տարր քշել էին Արաքսի աջ ափը: Հայերի թիվը նշված խանություններում հաշվվում էր 25 հազար, իսկ մահմեդականներինը՝ 31 հազար, մինչդեռ Ատրպատականում ապրում էր 65 հազար հայ[7]: Ռուսաստանը կանգնած էր Երեւանի եւ

1 Ռուսներն Ադրբեջան են անվանել:

2 «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երեւան, 1972, էջ 71-72:

3 Տե՛ս **С. Глинка**, Описание переселения армян Аддрбиджанских в предели России, М., 1831, էջ 47:

4 Տե՛ս անդ, էջ 52:

5 Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 4, Երեւան, 1984, էջ 430:

6 Անդ, էջ 114,131:

7 Տե՛ս **Լեո**, անդ, էջ 426-427:

Նախիջեւանի գարածքները բնակեցնելու խնդրի առաջ: Ծրագրվում էր Հյուսիսային Կովկասից կազակներ տեղափոխել եւ բնակեցնել հայկական գարածքներում: Քանի որ այդ ծրագիրը շատ ծախսագար էր, ուստի ռուսական իշխանությունները նպագակահարմար գգան կազմակերպել Ագրպագականի հայության գաղթը դեպի Ռուսասգանին անցած գարածքներ: Այս ժողովրդագրական գործոյթով ռուսները կթուլացնեին Պարսկասգանի գնդեսությունը (գրեթե ողջ առեւգուրը գգնվում էր հայերի ձեռքին), միաժամանակ կզարգացնեին Անդրկովկասի գնդեսությունը: Այդ կապակցությամբ Կովկասի կառավարիչ եւ ռուսական զորքերի հրամանագար, գեներալ Պասկեւիչը ռուսական բանակի գլխավոր շգաբի պեգին ուղարկած գեկուցագրերից մեկում գրում է. «Մեր սահմանի ամայի հողերի բնակեցումը հնազանդ, աշխագասեր եւ հավագով մեզ նվիրված ժողովրդով կարող է մեծ օգուգ բերել»[8]:

Ինչպես նշեցինք, ըսգ Լեոյի, պարսկահայերն առանձնապես մեծ ոգեւորությամբ չէին անցնում ռուսական գարածքներ: Ռուսական իշխանությունները այդ գեղափոխության կազմակերպիչ էին նշանակել Պեգերբուրգից հրավիրված Ղազարոս Լազարյանցին: Այս հարցում անմասն չէին մնացել նաեւ Ներսես Աշգարակեցին եւ Պարսկասգանում Ռուսասգանի արգակարգ եւ լիազոր դեսպան Ա. Գրիբոյեդովը:

Վերաբնակվողներին ընդունելու համար, 1828 թ. փեգրվարի վերջերին, Երեւանի մարզային ժամանակավոր վարչությանը կից կազմակերպվում է կոմիգե, որը հայկական մարզի վարչության ստեղծումից հետո (1828 թ. մարգի 21) գործում էր նրան առընթեր, նրա ղեկավարության ներքո[9]:

Անհրաժեշգ ենք համարում ներկայացնել պարսկահայերի գեղաշարժի որոշ մանրամասներ: Վերաբնակեցումը սկսվեց 1828 թ. գարունը բացվելուն պես: Կովկասյան կորպուսի հրամանագար Պասկեւիչը կարգադրել էր, որ վերաբնակվողների շարժումը դեպի Ռուսասգան կագարվեր մաս-մաս, յուրաքանչյուր գյուղ մի առանձին խումբ կազմեր[10]: Մարգին սկսվում է վերաբնակեցման գործընթացը: Այն իրականացվում է հիմնականում Մարաղայի, Խոյի եւ Սալմասգի խանություններից, այսինքն՝ Պարսկահայքից, եւ ընթանում է ռուսական ու պարսկական իրարամերժ քարոզչության պայմաններում: Պարսկական կողմը պնդում էր (գես՛ Աբաս Միրզայի երկու նամակները Լազարյանին)[11], որ ռուսական կողմը խախգել է Թուրքմենչայի պայմանագրով նախագեսված «հոժար եւ ազագ կամքը»: Ռուսական կողմն ամեն կերպ փորձում էր կանխել պարսկական հակառուսական գործողություններն ու քարոզչությունը: Պարսկահայերի վերաբնակեցումը կազմակերպող եւ ղեկավարող, ռուսական ցարի թիկնազորում ծառայած, գնդապեգ Ղ. Լազարյանը Պասկեւիչին ներկայացրած հաշվեգվության մեջ անկեղծորեն նկարագրում է վերաբնակեցման մանրամասները, որը գեղ է գգել Ս. Գլինկայի նշված աշխագությունում: Պարսիկ քարոզիչների գործողությունների մասին նա գրում է. «Պարսկական իշխանությունները գեսնելով իմ հաջողությունները նոր արգելքներ էին ստեղծում: Նրանց քարոզիչները հայերին համոզում են չգնալ, այլա-

8 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երեւան, 1974, էջ 172:

9 Տե՛ս անդ:

10 Տե՛ս **С. Глинка**, Обозрение истории армянского народа, М., 1832, էջ 432-433:

11 Տե՛ս **С. Глинка**, Описание переселения армян Аддрбиджанских в предели России, էջ 66-67, 78:

պես տեղ հասնելով արագ կվերածվեն ճորտերի, կգորակոչվեն զինվորական ծառայության (солдаты), իսկ եթե մնան Պարսկաստանում, երկար ժամանակ կազատվեն հարկերից: Հայերին առաջարկում էին ավելի շատ դրամ, քան ես կարող էի տալ նրանց»[12]: Ի դեպ, Ղ. Լազարյանը հայերին զգուշացնում է. ինչ դուք այստեղ թողնում եք, Ռուսաստանում չեք գտնի, բայց ձեր սերունդները կգտնեն հանգստություն եւ բարօրություն: Նա ըստ պատշաճի պատասխանելով Աբաս Միրզայի երկու նամակներին, միաժամանակ հաղորդում է, որ Պարսկաստանի ժողովրդական մինիստր Ասկար խանի հետ ապրիլի 12-ին Խոյի ամրոցի մոտ գաղթող խմբի (ըստ Աբաս Միրզայի հիշատակած փաստերի) անդամներին հարցումներ են արել, վերջիններիս պատասխանները եղել են. «Մենք գերադասում ենք ուտել ռուսական խոտ, քան պարսկական հաց»: Եւ ես,-շարունակում է Լազարյանը,-վերցրի նրանց գրավոր վկայությունը[13]: Մինչդեռ պարսկական իշխանությունները տոն էին տալիս քուրդ-պարսկական խուժանին՝ ավերել ու քարեր նետել գաղթականների վրա: Գաղթականների քարավանների վրա հարձակվում էին ավազակները, մուսուլմանները վանկարկում էին «դավաճաններ», նրանց նույնիսկ քարկոծում էին, ուստի հայերը շարժվում էին ռուսական զինվորների ուղեկցությամբ:[14]

Ղ. Լազարյանի հաշվետվությունը, որքանով էլ միակողմանի լինի եւ բխի ռուսական շահերից, այնուհանդերձ հավատ է ներշնչում: Նա վերջում գրում է. «Եւ այսպես, սկսելով իմ գործունեությունը 1828 թ. փետրվարի 26-ին ավարտեցի այն հունիսի 11-ին, բացառությամբ 1500 ընտանիքի, որոնք մնացին»: Վերջում նա խնդրում է Պասկեւիչին՝ բարեխոսել ցարին՝ վերաբնակեցված հայերի վիճակը բարելավվելու համար:

Միաժամանակ կասկածից վեր է, որ ռուսները եւ անձամբ Ղ. Լազարյանը, դիմել են թույլատրելի եւ նաեւ անթույլատրելի միջոցների, որպեսզի վերաբնակեցման ձեռնարկը հաջողությամբ իրականացվի: Ռուսական իշխանություններն այդ գործի համար պատահամամբ չէին ընտրել Ղ. Լազարյանի թեկնածությունը:

Այժմ դիտենք պարսկահայերի 1828 թվականի եւ արեւմտահայերի 1829-1830 թվականների վերաբնակեցման հիմնահարցը: Հայոց պատմագիտության երախտավոր Լեոն, որը ռուսամետ չէր, այլ կերպ է գնահատում պարսկահայերի գաղթը: Նա իր գնահատականներում ծայրահեղական է, բայց ճիշտ մտահանգումներ է կատարում: Նա հայության ռուսամետ ոգեւորությունը, հատկապես, երբ Նիկոլայ Առաջինի հրահանգով ստեղծվում է Հայկական մարզը, համարել է «ստրուկների պար»: Ավելին, Պարսկաստանից տեղափոխված հայերի կարգավիճակը համեմատելով նույն տարածքում ապրող մահմեդականների հետ, հայերինը համարում է աղետալի. «Այսքան արյունոտ պարտականությունները կատարում էր, այսքան ծանր զոհեր էր տալիս հայ ժողովուրդը լոկ, որպեսզի արժանանա հավասար վերաբերմունքի այն մահմեդական ժողովրդի հետ, որ իսպառ ազատ էր պարտականություններից ու զոհերից: Պարսկահայ գաղթականությունը, դեռ նույնիսկ չտեղավորված Արարատյան երկրում, Պասկեւիչը նրանից զորք էր պահանջում եւ, հավաքելով մոտ 2000 հոգի

12 Անդ, էջ 123:
13 Տես անդ, էջ 125:
14 Տես **С. Глинка**, Обозрение истории армянского народа, էջ 432-433:

ուղարկում է պատերազմելու օսմանյան բանակի դեմ»[15]: Այս ճշմարտություններով հանդերձ՝ անհնար է ընդունել մեծ պատմաբանի միակողմանի կարծիքը: Որ Պարսկաստանից հայերի տեղափոխումը շատ անկազմակերպ էր, հակառակ կարծիք լինել չէր կարող: Այս մասին անդրադարձ կա նույնիսկ խորհրդային պաշտոնական գրականության մեջ. «Հոգ չէր տարվել բնակարանային ամենատարրական հարմարություններ ստեղծելու մասին... միջոցներ չէին ձեռնարկել գաղթականներին ապահովելու պարենի, նույնիսկ անհրաժեշտ քանակությամբ հացով»,- կարդում ենք Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 54-րդ հատորում: Ընդհանրապես, հայերի բոլոր, նույնիսկ 1946-1948 թթ. սփյուռքահայերի Մեծ հայրենադարձությունը իրականացվեց լուրջ ու աններելի թերություններով: Չմոռանանք, որ 1828 թ. հայերը վերաբնակեցվել էին մի երկիր, որը դասական ճորտատիրական եւ գաղութային համակարգ ուներ: Հայերը, բացի կրոնական հանգամանքից, Ռուսաստանում ենթարկվում էին բոլոր այն հալածանքներին, որոնց ենթարկվում էին Պարսկաստանում: Այս ամենով հանդերձ, ասում ու գրում ենք, որ 1828 թ. պարսկահայերի, 1829-1830 թթ. արեւմտահայերի վերաբնակեցումով Ռուսաստանին անցած հայկական տարածքներում, պատմական Հայաստանի մի մասում ավելի ուշ հնարավորություն ստեղծվեց հիմնելու պետականություն:

1828-1829 թթ. պարսկահայերի վերաբնակեցմանը վերաբերող գրականության մեջ, գրեթե բոլոր պատմաբանները, բացի Լեոյից, ներկայացրել են պարսկական եւ ռուսական շահերը, բացակայում է հայկական շահը: Հայերը կարծես մոռացել են իրենց հնդկահայ (Ծահամիր Ծահամիրյանի) եւ ռուսահայ (Հովսեփ Արղությանի) ծրագրերը: Նրանք չէին սակարկում նույնիսկ Պարսկաստանում թողած գույքի դիմաց փոխհատուցման հարցում: Նեստորականները ռուսական իշխանություններից պահանջում էին ամբողջ գույքի արժեքը, իսկ հայերը միայն մեկ երրորդը: Առաջինները հասան իրենց նպատակին, տեղափոխվեց 100 նեստորական ընտանիք, իսկ վերաբնակեցվող հայերի ողջ ունեցվածքի մի զգալի մասը մնաց Պարսկաստանում: Թեեւ Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածով 5 տարվա մեջ նրանց լիազորված անձինք պիտի վաճառեին ունեցվածքը, բայց ռուսական զորքերի հեռանալուց հետո, այդ գույքը մնաց Պարսկաստանին: Մինչդեռ նրանք կարող էին իրենց գույքն ու ունեցվածքը վաճառել մնացող քրիստոնյաներին կամ մահմեդականներին կամ թողնել վստահելի անձանց՝ վաճառքը կազմակերպելու,- ինչպես գրում է Ղ. Լազարյանը, բայց սա չկատարվեց: Պարսկական իշխանությունները իրենց քաղաքացիներին չթույլատրեցին գնել գաղթողների գույքը»[16]:

Պարսկահայերի վերաբնակեցումը իրականացնելու համար Ռուսաստանը ծախսել է չնչին գումար. Պարսկաստանի քսան միլիոն ռուբլի արծաթ ռազմատուգանքից ընդամենը 14 հազ. ֆերվոնեց եւ 400 ռուբլի. «Այս ընթացքում Պասկեւիչին է գրում Ղ. Լազարյանը,- ես Ձեզանից ստացա 14 հազ. ֆերվոնեց եւ 400 ռուբլի արծաթ, այդ թվում 200 ֆերվոնեց փվեցի Նախիջեւանի բաժանմունքին: Այդ միջոցներով վերաբնակեցրի 8249 քրիստոնյա ընտա-

15 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 435:

16 **Հ. Գլինկա**, Описание переселения армян Аддрбиджанских в предели России, с. 118.

նիք»[17]: Այն դեպքում, երբ նշված ռազմապուգանքից Նիկոլայ ցարը Պասկեվիչին է նվիրում մեկ միլիոն ռուբլի[18]:

Պարսկահայերը չէին սակարկում եւ չէին գիտակցում, որ ռուս-պարսկական հարաբերություններում վերածվել էին քաղաքական լուրջ գործոնի, նրանց համար պայքար էր ընթանում երկու հարեւան երկրների միջեւ: Այո՛, ռուսական խոտը պարսկական հացից գերադասողը չէր կարող մտածել ո՛չ անկախության եւ ո՛չ էլ ինքնավարության մասին: Իսկ ինչ քարոզչություն էին տանում հայոց հոգեւոր հովիվներն ու աշխարհիկ այրերը: Նրանց ընտրել էր ցարիզմը ու լծել իր գաղութային քաղաքականության կառքին: Հայությունը ոչինչ չարեց, որպեսզի դե յուրե հռչակված Հայկական մարզը վերածվի դե ֆակտո հայկական ինքնավարության: Երբ պարզ դարձավ, որ ռուսական ցարը մերժել է Հայաստանի ինքնավարության շատ համեստ ծրագիրը, արեւմտահայությունը չպետք է միտվեր դեպի Ռուսաստան ու աջակցեր ռուսական զորքերի առաջխաղացմանը՝ ո՛չ 1828-1829, ո՛չ 1853-1856 եւ ո՛չ էլ 1877-1878 թվականներին ընթացող ռուս-թուրքական պատերազմներում: Այդ պատերազմներում, նույնպես, նա ավելի հզոր քաղաքական գործոն էր: Եթե արեւմտահայությունը մնար իր հայրենիքում, դժվար թե թուրքերը կարողանային իրականացնել Հայոց ցեղասպանությունը:

Երբ Արեւելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, ակնհայտ դարձավ, որ Պարսկահայքում այլեւս հայկական պետականություն հնարավոր չէ վերականգնել: Նշանակում է 1828 թ. պետք է ռուսական զորքերի կողմից գրաղեցրած տարածքներից, թեկուզ հարկադրանքով, ողջ հայությունը տեղափոխվեր Ռուսաստանին անցած հայկական տարածքներ: Հայրենիքը լքում են այն ժամանակ, երբ անհետանում են պետականության վերականգնման բոլոր հնարավորությունները: Հետեւաբար արեւմտահայերի վերաբնակեցումը Ռուսաստանին անցած հայկական տարածքներում, որտեղ ռուսները հայությանը նույնիսկ ինքնավարություն չեն շնորհել, եղել է ճակատագրական եւ ազգակործան քաղաքական քայլ: Եւ, վերջապես, հայկական թե՛ առաջին, թե՛ «երկրորդ», եւ թե՛ երրորդ հանրապետությունների ժողովրդագրական ատաղձը հիմնականում կազմել են ոչ միայն իրանահայերն ու նախիջեւանահայերը, այլեւ արեւմտահայերը՝ ռուսական վերաբնակեցումների եւ Հայոց ցեղասպանության պատճառներով: Այսպիսով, 1828 թ. իրանահայերի վերաբնակեցումը Ռուսաստանին անցած հայկական տարածքներում ընդհանուր առմամբ կարելի է դրական համարել՝ իր բոլոր բացասական հետեւանքներով հանդերձ: Սակայն հայությունը եւ նրան գլխավորող քաղաքական ուժերը այդպես էլ դասեր չքաղեցին պատմությունից: Հետագայում նույնպես. 1853-1856, 1877-1878 թթ. ռուս- թուրքական պատերազմներին եւ առաջին աշխարհամարտին հայերը մասնակցություն ցուցաբերեցին եւ նպաստեցին ռուսական զենքի հաղթանակներին ու նորից խաբվեցին: Ավելին, Ի. դարում, արդեն բոլշեւիկյան Ռուսաստանի միջամտությամբ եւ աջակցությամբ, հայերը կորցրին ոչ միայն Արեւմտյան Հայաստանն ու Կիլիկիան, այլեւ Ռուսաստանի կազմում մնացած հայկական տարածքների զգալի մասը, այդ թվում 1828 թ. պարսկահայերի վերաբնակեցրած նախկին Հայկական մարզի մեծ մասը՝ Նախիջեւանը, Օրդուբադը եւ հայության հավերժության խորհրդանիշը եւ քրիստոնեական սրբություն համարվող Արարատ լեռը իր շրջակայքով:

17 Անդ, էջ 131:

18 Տես **Լեո**, անդ, էջ 432: